

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ԼՈՌՈՒ

ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Օգոստոսի 5-ին Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Տիգրան Զարգարյանը, փոխտնօրեններ Հասմիկ Ղազարյանը և Ռազմիկ Առաքելյանը այցելեցին Լոռու մարզի Ստեփանավանի քաղաքային գրադարան՝ ծանոթանալու գրադարանի վիճակին և գործունեությանը: Ստեփանավանի քաղաքային գրադարանը ՀՀ մշակույթի նախարարության կողմից հավատարմագրված է, հազեցված է համապատասխան կահույքով և տեխնիկայով, Ստեփանավանի քաղաքապետարանի հովանավորչությամբ կատարվել են վերանորոգման անհրաժեշտ աշխատանքներ:

Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Տիգրան Զարգարյանը անցկացրեց սեմինար-խորհրդակցություն՝ «21-րդ դարի մարտահրավերները և ժամանակակից գրադարանները» թեմայով, անդրադարձավ քաղաքային և համայնքային գրադարանների գործունեության առաջընթացի հեռանկարներին՝ կարևորելով նրանց մասնակցությունը թվային գրադարանների ստեղծման աշխատանքներին: Խորհրդակցությանը մասնակցում էին նաև Տաշիրի քաղաքային գրադարանի աշխատակիցները:

Ստեփանավանի և Տաշիրի քաղաքային և համայնքային երկու գրադարանների նվիրաբերվեց մոտ 230 միավոր գրականություն: